

ԹՈՒՐԹԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVI—XVIII դդ.)

(Համառոտ ակնարկ)

Ա. Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հարուստ աղբյուրագիտական նյութեր կան թե՛ մայրենի և թե՛ օտար՝ հունարեն, արաբերեն, պարսկերեն, վրացերեն և արևմտաեվրոպական լեզուներով: Պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած տեղեկությունները, հատկապես Արևմտյան Հայաստանի պատմության XVI—XVIII դդ. վերաբերող պատմագրական նյութերն ու վավերագրական փաստաթղթերը, քանի որ դրանք սերտորեն առնչվում են Օսմանյան կայսրության ընդհանուր պատմության հետ: Թուրք հեղինակները իրենց երկերում նկարագրելով միջնադարի քաղաքական իրավիճակը, միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի և հարևան ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության, մասամբ էլ սոցիալ-տնտեսական կյանքի և այլ հարցերի վերաբերյալ:

Թուրք պատմագիրները հատուկ ուշադրություն են դարձրել Եվրոպայի հարավ-արևելյան երկրներում ծավալված ռազմական գործողություններին, ինչպես նաև Անդրկովկասում և հատկապես պատմական Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-իրանական երկարատև պատերազմներին: Հարկ է նշել, որ նրանք, շատ չնչին բացառությամբ, իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հիմնականում սուլթանների, վեզիրների, փաշաների և նրանց կատարած նվաճողական պատերազմների գովերգման վրա: Թե ինչ ժանր հետևանքներ են թողել երկարատև և կործանարար պատերազմները նվաճված երկրների տնտեսական կացության վրա, այդ մասին թուրք պատմագիրները գրեթե չեն խոսում:

XVI դարի առաջին կեսի պատմական դեպքերը մեծ մասամբ դրի են առել «Շահնամե-խան» (Շահնամե կարդացող կամ ասող) կոչվող արքունական բանաստեղծները: Տվյալ ժամանակաշրջանի հեղինակները ժամանակագրական կարգով նկարագրել են հատկապես սուլթան Սուլեյման Կանունի (1520—1566) արշավանքները և գովերգել ու փառաբանել նրա ռազմական հաջողությունները թե՛ արևելյան և թե՛ արևմտյան ռազմաճակատներում: Նման աշխատանքները կոչվում էին «Ջաֆեթնամե» (Հաղթանակի գիրք), «Սելիմնամե» (Սելիմի գիրք), «Սուլեյման նամե» (Սուլեյմանի գիրք) կամ էլ «Թարիհ-ի Սուլեյման» (Սուլեյմանի պատմություն):

Տվյալ ժամանակաշրջանի պատմագիրներից հիշատակության արժանի են Քյուչյուկ Նիշանջին, Քեմալ փաշա զադեն (1468—1536, նրան հաճախ անվանել են նաև Իրն Քեմալ), ինչպես նաև Սուլեյման Կանունիի մեծ վեզիրներ Լյութֆի փաշան (մահ. մոտ 1564 թ.), Ռուստեմ փաշան (1500—1561), որոնք հիմնականում գրել են Օսմանյան կայսրության քաղաքական պատմությունը մինչև իրենց ժամանակաշրջանը «Թեվարիհ-ի Ալի Օսման» (Օսմանյան դինաստիայի պատմություն) խորագրի տակ: Տվյալ ժամանակաշրջանի համար կարևոր նշանակություն ունի նաև Խոջա Սադեդդին Էֆեն-

դի (1536—1601) «Թաջ ութ-թեվարիհ»¹ (Պատմության թագ, այսինքն՝ պատմության ընտրանի) ժամանակագրությունը, որն ընդգրկում է օսմանյան պետության հիմնադրումից մինչև Սելիմ III-ի ժամանակաշրջանը։

XVII դարի մի շարք թուրք պատմագիրներ, շարունակելով իրենց նախորդների ավանդույթը, նույնպես շարադրել են Օսմանյան կայսրության պատմությունը, նրա հիմնադրումից մինչև իրենց ժամանակաշրջանը։ Այդ աշխատանքներում հիմնական ուշադրություն է դարձված Օսմանյան կայսրության ռազմավարական կառուցվածքի պատմության վրա։ Մի քանիսը նույնիսկ քննադատական վերլուծության են ենթարկել օգտագործված աղբյուրները։ Առավել աչքի ընկնող պատմագիրներից հիշատակության արժանի են Ֆերիզուն Ահմեդ բեյը, Մուստաֆա Սելանիկին, Հեմդեմի Սուլթազադեն, Կարաչեբրիզադե Արդուլ Ազիզը, Մյունեջլիմ բաշին։ Այս պատմագիրների ավանդույթով է շարադրված նաև Կոջա Հյուսեյն էֆենդիի «Բեդա-ի ուլ-վեբայ» (Ուշագրավ իրադարձություններ) աշխատությունը, որն ընդգրկում է Օսման II-ի (1618—1622) գահակալության վերջին շրջանը։ Կոջա Հյուսեյնի պատմության 2-րդ հատորը հայտնաբերվեց 1950 թ. Սանկտ Պետերբուրգի արևելագիտության ինստիտուտի ձեռագրային ֆոնդում²։

XVII դարում որոշակի զարգացման հասավ նաև թուրքական պատմա-աշխարհագրական գրականությունը։ Այս տեսակետից թուրքական պատմագրության և աշխարհագրության ականավոր ներկայացուցիչներ Քյաթիր Զեյնեբին (1609—1654) և էվլիա Զեյնեբին (ծնվ. 1611 թ.) իրենց երկերում հարուստ նյութ են տալիս Մերձավոր Արևելքի, Եվրոպայի հարավ-արևելյան և կենտրոնական շրջանների մի շարք երկրների մասին։ Նրանք կարևոր տեղեկություններ են տալիս նաև Հայաստանի մասին։ Հատկապես Քյաթիր Զեյնեբին տվյալ ժամանակաշրջանի օսմանյան իրականության մեջ բազմակողմանի զարգացած անձնավորություններից մեկն էր համարվում։ Նա հայտնի է ոչ միայն որպես ականավոր թուրք աշխարհագիր, այլև իր ավանդըն է ներդրել գիտության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ պատմությունը, փիլիսոփայությունը, մատենագիտությունը և այլն։ Նրա աշխատությունները, որոնք պարունակում են հարուստ փաստական տեղեկություններ, լայն ուշադրության են արժանացել ոչ միայն թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս, հատկապես Եվրոպայում։ Քյաթիր Զեյնեբիի «Ջիհան-նյուման» առաջին ընդհանուր պատմաաշխարհագրական աշխատությունն է, որի շարադրումը նա ձեռնարկել է 1648 թ.։ «Ջիհան Նյումայի» հրատարակությունը³, որը ներկայումս հանդիսանում է մատենագիտական հազվագյուտ օրինակ, բաղկացած է ընդարձակ ներածությունից և առանձին գլուխներից, ուր տրված է ասիական երկրների նկարագրությունը։ 41-րդ գլուխը նվիրված է Հայաստանի նկարագրությանը։ Այս գլխում խոսվում է միայն Արևմտյան Հայաստանի մասին, այսինքն այն նահանգների, որոնք Կասթ-ի Շիրիների պայմանագրով (14 սեպտեմբեր 1639 թ.) մնացին Օսմանյան կայսրության տիրապետության տակ։ Քյաթիր Զեյնեբին այս գլխում Արևելյան Հայաստանի նկարագրությունը առանձին չի տվել։ Արևելյան Հայաստանը, որտեղ կազմվել էին Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունները, այդ ժամանակ գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի գերիշխանության ներքո։ Արևելյան Հայաստանի նահանգների նկարագրությունը տրվում է 39-րդ գլխում, Վրաստանի և Ասորպատականի քաղաքների նկարագրության հետ։

«Ջիհան Նյումայի» հեղինակային ձեռագիրը, որը գտնվում է Թուրքիայի պալատում (Կ. Պոլիս) և այլ ձեռագրային ընդօրինակությունները

¹ Hoca Sadeddin efendi. Tac üt-te'arih. C. I—II, İstanbul, 1279 (1862) (արաբատառ)։

² Хюсейн Беда' и ул века'й, издание текста, введение и общая редакция А. С. Тверитиновой. Т. 1—2, М., 1961.

³ Kat'ip Celebi. Cihannuma. İstanbul, 1732 (արաբատառ)։

վերջանում են վանի վիլայեթի նկարագրությամբ: Հայտնի է, որ Քյաթիբ Չելեբիի գրչին է պատկանում «Արմենիա երկրի մասին» գլխի միայն մի մասը, այսինքն՝ վանի և Կարսի վիլայեթների նկարագրությունը: Մնացած վիլայեթների նկարագրությունը վերցված է մի այլ աշխարհագրի՝ Աքուբեք Իրն-Բահրամի աշխատությունից և լրացված է «Ջիհան նյումայի» հրատարակիչ Իբրահիմ Մյուսթեֆերիկայի կողմից: Այս կապակցությամբ Իբրահիմ Մյուսթեֆերիկան իր «Հրատարակչի հավելվածում» (Tecil el-tabii) տալիս է հետևյալ բացատրությունը. «Թյուրքիմացությունից խուսափելու համար [անհրաժեշտ է նշել], որ այս հետաքրքիր երկի հեղինակը՝ հանգուցյալ Քյաթիբ Չելեբին, գրքի սկզբում խոստացել էր, որպեսզի այս հանրահայտ խմբագրության մեջ նկարագրի աշխարհի պետությունները և երկրների գիրքը արևելքից դեպի արևմուտք: [Այսուհանդերձ] այն հասցվում է մինչև այսօր, չնայած նկարագրի և սարբեր մարդկանց մոտ գտնվող ընդօրինակությունները վանի վիլայեթի նկարագրությունից այն կողմ չեն անցնում: Ի միջի այլոց, հարկ եղավ գրքի սկզբից մինչև այսօր տալ մի շարք բացատրություններ, իսկ վերջում ամբողջացնել այն, Ինչպես ձեռագրում, այնպես էլ այս հրատարակության մեջ 42-րդ գլուխը ընդգրկում է «Արմենիա երկրի» նկարագրությունը: Հիշյալ երկրի բաժանման և սահմանադրաման ժամանակ, մատնանշելով գոյություն ունեցող տարածայնությունները, Քյաթիբ Չելեբին՝ ասել է՝ «էրդրումի և Կարսի վիլայեթները, որոնք մտնում են Մեծ Արմենիայի մեջ, նկարագրելու ենք առանձին բաժիններով»: Այնհայտ է, որ [Քյաթիբ Չելեբին] այս նկարագրությունները տալիս է գուգընթացարար [հարևան] երկրների տարբեր գլուխներում և բաժիններում: Հավանական է, որ այս գրքի շարունակությունը կորել է կամ անժամանակ մահը թույլ չի տվել [հեղինակին] կատարելու իր խոստումը: Ուստի, նվազադա (այսինքն՝ Իբրահիմ Մյուսթեֆերիկան—Ա. Փ.), որպեսզի գոնե մոտավորապես իրագործեմ հանգուցյալի նպատակն ու ջանկությունը, խոնարհաբար, իմ հնարավորությամբ սահմաններում տալիս եմ երկրների ու պետությունների նկարագրությունը, ձգտելով պահպանել նրա (Քյաթիբ Չելեբիի) աշխատության շարադրանքի ոճն ու հաջորդականությունը: Քանի որ Կարսի և Չրուզի վիլայեթները նախապես համառոտ հիշատակվում և նկարագրվում են Դյուրջիստանի և Ախախայի (Ախալցխա) գլուխներում, ուստի մենք կսկսենք էդդրումի վիլայեթի նկարագրությունից: Դրանով մենք արժանի հարգանք մատուցած կլինենք նաև նրանց, ովքեր հաստատում են, որ հիշյալ վիլայեթի քաղաքները պատկանում են Մեծ Արմենիային: Այնուհետև կաշխատենք անցնել Ախալցի մյուս երկրների նկարագրությանը, որպեսզի ամենաբարձրալն ասածու օգնությամբ գիրքը ամբողջացնենք: Երկրների և պետությունների նկարագրության ընթացքում մենք ընտրեցինք և կրճատեցինք Աբու Բեքր Իրն Բահրամ ալ-Դիմեշկիի թարգմանած «Ջոկրաֆիյա-ի Քաբիր» գրքի առանձին մասերը, իսկ երբեմն էլ դիմեցինք տեքստի անփոփոխ տեղադրման»⁴:

Այս ծանոթագրությունից պարզվում է, որ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումայում, հրատարակչի կողմից ընդգրկվել են Աբու Բեքր Իրն Բահրամի «Մեծ աշխարհագրություն» երկը, որի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած է հունդացի գիտնականներ, հայր և որդի Բլեոնների հանրահայտ «Atlas Major»-ի թարգմանությունը⁵:

Ինչպես նշեցինք, XVII դարի թուրքական իրականության դեմքերից է նաև թուրք ճանապարհորդ էվլիա Չելեբին, որը համաշխարհային արևելահիտություն մեջ մեծ ճանաչում է ստացել իր պատմաաշխարհագրական բնույթ-

⁴ Նույն տեղում, էջ 422:

⁵ Joan Blaeu. Atlas Major seu cosmographia blaeuiana qua solius salem. coelum accuratissima describuntur. Amsterdam, 1662.

թի «Ուղեգրություններ»։ Նրան հաճախ անվանել են թուրքական Իբն Բատուտայ կամ աշխարհաշրջիկ։

Էվլիա Չելեբիի «Ուղեգրություն» առաջին 6 հատորները հրատարակվել են 1896—1900 թթ. հրատարակիչ Ահմեդ Ջեվդեթի կողմից, Նեջիր Ասլմի խմբագրությամբ։ Այնուհետև 1928 թ. «Օսմանյան պատմության հանձնաժողովի» նախաձեռնությամբ լույս են ընծայվում 7-րդ և 8-րդ հատորները։ 1935 թ. լույս է տեսնում 9-րդ, իսկ 1938 թ. վերջին՝ 10-րդ հատորը լատինական տառադարձությամբ։

Էվլիա Չելեբիին իր «Ուղեգրություն» մեջ Քյաթիր Չելեբիի նման ստույգ պատկերացում չի տալիս պատմական Հայաստանի տարածքի, նրա սահմանների, հնագույն քաղաքների, բերդերի և գյուղերի մասին։ Բայց մեծ մասամբ հայերով բնակեցված պատմական Հայաստանի տարածքը նրան ստիպել է խոսել այդ մասին։ «Ուղեգրություն» մեջ կան բավականաչափ կարևոր նյութեր ոչ միայն պատմաաշխարհագրական բնույթի, այլև տվյալ դարաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության և պատմական իրադարձությունների վերաբերյալ։ Կաբինի, Երզնկայի և այլ վայրերի նկարագրությունների ընթացքում որոշակի հետաքրքիր տվյալներ են հաղորդվում հայերով բնակեցված գյուղերի, նրանց տարածքի և սովորությունների մասին։ «Ընդհանրապես [էրզրումի] արվարձաններում մեծ մասամբ հայ ուսանողներ են ապրում, որոնք ունեն 13 եկեղեցիներ։ Երևելի մարզիկ, ըստ իրենց սովորության, կրում են կապույտ ասվից պատրաստված [հագուստներ], իսկ գլուխներին փաթաթում են սրբիչներ։ Սովորական մարդիկ հագնում են շալից պատրաստված հագուստ, իսկ ոտքերին՝ պարզ տրեխներ։ Նրանք վերին աստիճանի աշխատասեր ուսանողներ են։ Հայ կանայք տափակագլուխ են և կրում են սպիտակ ծածկոցներ»։

Հաճախ ուշադրություն է դարձվում առևտրաքարավանային հաղորդակցության ճանապարհներին, դրանց ուղղություններին, հեռավորությանը։ «Դե-վիրան գյուղը հնուց ի վեր հայերով բնակեցված, մոտավորապես 100 տներիով գյուղ է։ Գյուղը գտնվում է [Կելիտ] գետի մոտակայքում, Ակշարայի հովտում։ Այստեղից դեպի արևելք գնալով, մենք 4 ժամվա ուղևորությունից հետո հասանք էնդերուս գյուղի իջևանատունը։ Այն հայկական բարեկարգ գյուղ է և ղեմամբ (միջին մեծության հողակտոր), մոտ 100 տներով։ Դանը-վում է նույնպես Ակշարայի հովտում, Շաբին-Կարահիսարի մոտակայքում»։

Էվլիա Չելեբիին իր ճանապարհորդության ընթացքում կանգ է առել նաև ժողովուրդների կրոնական պաշտամունքների, ինչպես նաև ուխտատեղիների նկարագրության վրա։ Սովորաբար հայկական եկեղեցիներին վերաբերող նրա տվյալները խիստ սահմանափակ են։ Այնուհանդերձ, հեղինակն անտարբեր չի անցել միջնադարում կառուցված հանրահայտ վանքերի կողքով և հնարավորության սահմաններում կարևոր նյութեր է հաղորդել նրանց մասին։ Այդ տեսակետից առավել հետաքրքրություն է ներկայացնում էջմիածնի, Մշո Ս. Կարապետ, Վարադա և Աղթամարի վանքերի նկարագրությունը։ Էջմիածնում նա ականատես է եղել մեռնոթոնների արարողությանը, բայց ինչպես հատուկ է Էվլիա Չելեբուն, այն նկարագրված է ավելորդ չափազանցություններով ու երևա՛յալան պատկերներով։ Առավել ուշադրության արժանի են Մշո Ս. Կարապետ վանքին վերաբերող նյութերը։ Այստեղ ցույց է տրված, թե վանական կալվածների գոյությունը վտանգից զերծ պահելու համար, վանքի հոգևոր առաջնորդները ինչպիսի մեծ նվիրատվություններ են կատարել թուրք փաշաներին»։

«Ուղեգրություն» մեջ կարևոր տեղ են գրավում նաև Էվլիա Չելեբիի կող-

© Э в л и я Ч е л е б и. Книга путешествия. Вып. 3, М., 1983, с. 94.

7 Նույն տեղում, էջ 80։

8 Թուրքական աղբյուրներ ..., հատ. Գ, Էվլիա Չելեբի, Թարգմանություն բնագրից, առա-ջարանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի. Երևան, 1967, էջ 170—171։

միջ նկարագրված քաղաքական դեպքերը, որոնց մի մասին ինքը մասնակից և ակտիվորեն է եղել: Այդ տեսակետից ուշադրության արժանի են թուրք-իրանական երկարատև պատերազմներին վերաբերող նյութերը: Հայտնի է, որ այդ պատերազմների հետևանքները ծանր եղան ոչ սիլայն Հայաստանի, այլև Անդրկովկասի հարևան մյուս ժողովուրդների համար:

Որպես աշխարհագիր հիշատակության արժանի է նաև թուրք պատմագիր Մյունեջիմ բաշին (պալատական գլխավոր աստղագետ, Դերվիշ Ահմեդ էֆենդի, մահ. 1702 թ.), որի աշխատանքը պատմագիտական բնույթ ունի, սակայն նա կանգ է առել նաև պատմաաշխարհագրական հարցերի վրա: Մյունեջիմ Ռաշին թուրք պատմագիրներից առաջինն է, որ փորձել է պաշտպանել, թուրքերին և արաբներին սկզբնաղբյուրների հիման վրա գրել համաշխարհային պատմություն արաբներին լեզվով: Նրա աշխատությունը, որ կոչվում է «Չամի ազ-զուվալ» (Պատմությունների պատմության հավաքածու կամ Տիեզերական պատմություն) թարգմանվել է թուրքերենի նրա մահից հետո, 1720—1730 թթ.: Թուրքերեն թարգմանությունը, որը կատարել է Ահմեդ էֆենդի, կրում է «Սահաֆ ուլ-ախբար» (Տեղեկությունների էջեր) խորագիրը, հրատարակվել է 1866 թ. երկու հատորով: Առաջին հատորում Մյունեջիմ բաշին լանդ է առել հայ ժողովրդի համառոտ պատմության վրա: Այն տրված է չորս մասով, ըստ դինաստիաների. 1. Հայկյաններ, 2. Աբշակունիներ, 3. Իսրայելյաններ, 4. Ռուբինյաններ: Երկրորդ հատորում արաբական աղբյուրների հիման վրա պատմաաշխարհագրական նյութեր են հաղորդվում նաև Հայաստանի մասին:

Սովորաբար արաբական աղբյուրներում Հայաստանը ներկայացվում է տոհմիկ նահանգների ձևով, առանց կոնկրետ սահմանաչափման: VIII դարի սկզբին արաբական խալիֆայությունը անցրկովկասյան երկրներից նվաճված երկրամասում սահմանեց նոր վարչական բաժանում, որի հետևանքով Հայաստանը, Վրաստանը և Ալվանքը կազմեցին մեկ լայնարձակ վարչական միավոր էրմինիա (կամ Արմինիա) անվան տակ: Այս անվանումը արաբական աշխարհագրագետները սկսեցին գործածել նոր բովանդակությամբ: Վարչական այդ միավորի կառավարումը գտնվում էր արաբական մեկ էմիրի իշխանության ներքո, կենտրոնն էր Դիլինը (մինչև 789 թ.), իսկ հետո Բարգան (Պարտավը):

XVIII դարի սկզբին օսմանյան պատմագրությունը ստանում է ավելի ձևավորված բնույթ, քանի որ կառավարության կողմից նշանակվում են հատուկ պատմագիր-տարեգիրներ՝ վակաա-նյուվիաներ: Այդպիսով տարեգրությունը կապվում է պետական պաշտոնի հետ: Ծարեգիրներին նշանակում էր սուլթանը, իրենց գրական հմտության հայտնի անձնավորություններից: Թվով 29 թուրք պատմագիր-տարեգիրների շարքում կան երկրորդական նշանակություն ունեցող պատմագիրներ, կան և այնպիսիները, որոնք իրենց «Թարիհներով» (պատմություններով) կարևոր տեղ են գրավում օսմանյան պետության տարեգրության մեջ:

1709 թ. առաջին պետական պաշտոնական տարեգիր է նշանակվում Մուստաֆա Նայիման: Նայիմայի տարեգրությունը ջարդանակել են հաջորդաբար նշանակված տարեգիրները, որոնցից առավել կարևորություն են ներկայացնում Մահմեդ Ռաշիդը (գրի է առել 1660—1726 թթ. դեպքերը), Իսմայիլ Ասլամը (Քյուլչուկ Չելեբիզադե մականունով, 1722—1728 թթ.), Մուստաֆա Սամին (1729—1733 թթ.), Հյուսեյն Շաքիրը (1733—1742 թթ.), Սուլեյման Իզզին (1744—1751 թթ.), Ահմեդ Վասրֆը (1752—1774 թթ. և 1783—1805 թթ.), Սադուլազ էնվերին (1769—1792 թթ.), Ջեվդեթ փաշան (1774—1825 թթ.), Հաֆըզ Ահմեդ Լյութֆի փաշան (1825—1876 թթ.):

• Mûneccim başı tarihi. Sahaif-ul-ahbar. C. I—II, İstanbul, 1285 (1868) (արաբառան):

Բացի պաշտոնապես պետության կողմից նշանակված վակա-նյուվիս-նեբից, պատմագրական կարևոր աշխատություններով հանդես են եկել նաև ոչ պաշտոնական այլ հեղինակներ, որոնք ուսումնասիրել են որոշ պատմական ժամանակաշրջաններ և գրել արժեքավոր երկեր: Նրանցից են՝ Մուստաֆա Սելաեիկին, Ֆերիդուն Ահմեդ բեյը, Իբրահիմ Փեչևլին, Կոշի բեյը, Այնը Ալի էֆենդին, վերոհիշյալ Քյաթիր Չելեբին և այլք:

Թուրք պատմագիրները իրենց աշխատություններում հաճախ ավելորդ մանրամասնություններ են հաղորդում սուլթանական արքունիքի և պատե-րազմական գործողությունների մասին: Հասկանալի է, որ պատմագիր-տարե-գիրը, որ նշանակված էր սուլթանի կողմից, ամենից առաջ պարտավոր էր ամենաշրակալի գույներով նկարագրել սուլթանին, վեզիրներին և այլ բարձ-րաստիճան պաշտոնյաներին և հավերժացնել նրանց անուններն ու գործերը: Ընդհանրապես թուրք պատմագիրների աշխատությունների մեջ նկարագրված դեպքերն ու իրադարձությունները ներկայացված են օսմանյան նվաճողական քաղաքականության պաշտպանության հայեցակետից:

Մյուսը մենք կանգ կառնենք թուրք այն պատմագիրների վրա, որոնց աշ-խատությունները առավել չափով առնչվում են հայ ժողովրդի պատմությանը: Իբրահիմ Փեչևլիի (1574—1650) «Թարիհ-ի Փեչևլի»¹⁰ (Փեչևլիի պատ-մություն) կրկնված աշխատությունը ընդգրկում է 1520-ից մինչև 1639 թ. ըն-կած ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմությունը: Աշխատու-թյան մեջ բերված փաստերը ցույց են տալիս, որ նրա հաղորդած տեղեկու-թյունները մեծ մասամբ հավաստի են, քանի որ նյութերի զգալի մասը նա շարադրել է որպես ականատես: 1593 թ. և հետագա տարիներին Փեչևլին մասնակցել է թե՛ Եվրոպական և թե՛ ասիական ճակատում Օսմանյան կայս-րության մղած մի շարք պատերազմների: Հիմնականում նա նկարագրել է թուրք-պարսկական պատերազմները և սուլթան Սուլեյման Կանունիի արշա-վանքը ավստրիացիների դեմ: Բավականաչափ նյութեր կան նաև ջեղախական ապստամբությունների մասին: Մեղ համար առավել հետաքրքրություն են ներկայացնում թուրք-պարսկական այն պատերազմները, որոնք տեղի են ունեցել 1533—1535 թթ. պատմական Հայաստանի տարածքում, Սուլթան Սուլեյման Կանունիի և շահ Թահմասպի միջև: Այդ շրջանում էր, որ օսման-յան բանակի մեծ վեզիր Իբրահիմ փաշան, հարձակվելով պարսիկների վրա, գրավում է Վանը, Արճնը, Ադիլջեվազը (Արծկե), Խլաթը և այնուհետև նվա-ճում Թավրիզն ու ամբողջ Ասորպատականը: «Երևանի, Ղարաբաղի և Նա-խիջևանի կողոպուտն ու թալանը» գլխում Իբրահիմ Փեչևլին մանրամասնու-թյամբ նկարագրում է թուրքական բանակի կատարած բարբարոսությունները, ձեռք բերված հսկայական ավարն ու կողոպուտը, ինչպես նաև գեղանի աղ-ջիկների և տղաների դերբվարումը սուլթանական բանակի համար¹¹:

Քյաթիր Չելեբիի «Ֆեզլեթ»¹² (Համառոտ պատմություն) խորագիրը կրող աշխատությունը նույնպես հավաստի սկզբնաղբյուր է XVI դարի վերջում և XVII դարի առաջին կեսում տեղի ունեցած պատմական դեպքերի ու իրադար-ձությունների ուսումնասիրման համար: «Ֆեզլեթում» հեղինակը մեծ ջանա-սիրությամբ պատկերել է հարավ-արևելյան Եվրոպայում, Հայաստանում և Անդրկովկասի այլ երկրներում տեղի ունեցած ռազմական գործողություննե-րը: Հայաստանի պատմությանն առնչվող նյութերը վերաբերում են թուրք-

¹⁰ Peçevi İbrahim, Tarîhi-i peçevi. C. I—II, İstanbul, 1281—1283 (1865—1867) (արաբատա):

¹¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողո-վրդների մասին. Առաջաբանը, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆ-րաստյանի. Երևան, 1981, հ. Ա., էջ 34:

¹² Kâtip Çelebi, Fezlele. C. I—II, İstanbul, 1286—1287 (1863—1871) (արա-բատա):

պարսկական պատերազմների 3-րդ շրջանին, որը սկսվել էր 1603 թ. և ընդհատումներով տևել 36 տարի, մինչև 1639 թ. կնքված «Կասրի Շիրինի» հաշտության պայմանագիրը: Այդ պատերազմները նկարագրված են «Ֆեզլեքեի» և «Կրկնորդ հատորում»: Քյաթիբը Չելեբին մանրամասն նկարագրել է Երևանի բերդի պարիսպների տակ տեղի ունեցած թեժ մարտերը՝ «Երևանի պարիսպի տակ առաջին մարտը», «Երկրորդ մարտը», «Երրորդ մարտը» վերնագրերի տակ: Այդ նկարագրությունների ընթացքում պատմագիրը գովերգում և դրվատում է օսմանյան հերոսություններն ու սխրագործությունները, և անարդարի խոսքեր ասում պարսիկների հասցեին¹³:

«Ֆեզլեքեից» կարելի է բերել բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են իրու հեղինակի անմիջական մասնակցությունը մի շարք արշավանքների: Այդ մասին Քյաթիբը Չելեբին խոսում է նաև իր երկու այլ աշխատությունների վերջում, որոնք հետևյալներն են՝ «Միզան ուլ-հակկ ֆի իհթիար ալ հակկ» (Արդարության շափը ամենաարդարը ընտրելու մեջ) և «Սուլամ ալ-վուսուլ իլա թաբակատ ալ ֆուհուլ» (Ամենագործողների աստիճաններին հասնելու սանդուղք): Նա 1635 թ. մասնակցում է Պարսկաստանի մեծ արշավանքին և Երևանի պաշարմանը: Ահա թե ինչ է գրում հեղինակը այդ մասին. «1635 թվականին սուլթան Մուրադ IV-ի հետ մեկնեցի Բևանի (Երևանի) արշավանքին, որակողի վերադարձա [Ստամբուլ] 1636 թվականին... Գտնվելով ավելի քան 10 տարի մարտերում և արշավանքներում, ես ականատես եղա բազմաթիվ դեպքերի և ճակատամարտերի»¹⁴:

XVII դարում Օսմանյան կայսրության ռազմավարական կառուցվածքի քայքայումը խիստ անհանգստացնում էր սուլթանական արքունիքին: Սուլթանների և մեծ վեզիրների կարգադրությամբ գործին տեղյակ անձինք աշխատում էին որոնել քայքայման դրդապատճառները և միջոցներ ձեռնարկել կայսրության երբեմնի հզորությունը վերականգնելու համար: 1607 թ. Այնի Ալի էֆենդին, սուլթան Ահմեդ I-ի (1603—1617) կարգադրությամբ կազմում է մի ռիսալե (ուղերձ)՝ «Օսմանյան օրենքները և դիվանի մատյանների բովանդակությունը» խորագրով¹⁵, որտեղ ցույց են տրվում կայսրության քայքայման էական դրդապատճառները: Այնը Ալին, պետական բարձր պաշտոններում գտնվելու հանգամանքով լավատեղյակ էր Օսմանյան կայսրության տնտեսական և ֆինանսական դժվարություններին: Գիտեի նաև, թե ինչպիսի վնաս են հասցնում պետությանը կառավարիչների գործադրած չարաշահումներն ու օրինազանցությունները:

Հայաստանի, հայերի և հարևան երկրների պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև միջնադարյան թուրք հեղինակների գրի առած համառոտ ժամանակագրությունները, օրագրերը, զեկուցագրերը և այլն: Նման ժամանակագրությունների թվին են պատկանում Քեմանի Մուստաֆա աղայի գրի առած «Գիրք Երևանի գրավման մասին»¹⁶ և Գյուրջիդադեի «Գիրք Թիֆլիսի գրավման մասին»¹⁷ ժամանակագրական գործերը: Երևանի և Թիֆլիսի գրավմանը վերաբերող այս գրքույկներում նկարագրվում են 1720—1724 թթ. ընթացքում թուրքական բանակի նվաճողական պատերազմները Անդրկովկասում: Քեմանի Մուստաֆա աղան Երևանի բերդի

¹³ «Джихан-нума» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении XVIII в. Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Ереван, 1973, с. 113—132.

¹⁴ Katip Çelebi. Keşf el-zunun, neşri Şerefettin Yalıtay. Ankara, 1941, s. 18.

¹⁵ Aynî Ali. Kavanin-i Ali Osman ve hulasa-i mezaninî defter-i divan. Istanbul, 1880 (1864) (արքունի).

¹⁶ A ktepe Münir. 1720—1724 Osmanlı-Iran münasebetleri ve silahşör Kemant Mustafa aganın Revan fetih-namesi. Istanbul, 1970.

¹⁷ Гюрджизаде. Книга завоевания Тбилиси. Турецкий текст с грузинским переводом, введением и примечаниями издала Ц. А. Абуладзе, Тбилиси, 1975.

գրավման մարտական գործողությունների անմիջական ականատեսն է եղել և դեպքերը գրի է առել տեղիումն վրա ամենայն մանրամասնությամբ: Հայտնի է, որ տվյալ ժամանակ Երևանի բերդը նվաճվեց թուրքերի կողմից 3 ասսավա պաշարումից հետո: Այս զեկուցագիրը ներկայացվել է սուլթան Ահմեդ III-ին (1703—1730) 1724 թ. հոկտեմբերի 25-ին: Բնականաբար, շարադրանքը կրում է կողմնակալ բնույթ, քանի որ այնտեղ գովերգվում են թուրքական բանակի հաղթական գործողությունները, բարձրաստիճան պալատական անձինք:

Երևանի գրավման դեպքերը նկարագրվում են նաև պատմագիր-տարեգիր Իսմայիլ Ասրմ էֆենդիի (Չելեբի Զադե) կողմից: Նրա պատմության ժամանակագրությունն է հիշրայի 1134—1141 (1721—1728) թթ.: Չելեբի Զադեն իր պատմության մեջ հիշատակում է Քեմանի Մուստաֆա աղային, քանի որ նրա միջոցով է առաքվել թուրքական բանակի հրամանատարին ուղղված կայսերական հրովարտակը, որը բովանդակում էր, «Երևանի բերդը շտապ գրավելու մասին» հրամանը: Դեպքերի շարադրման ընթացքում Չելեբի Զադեն անդրադարձել է նաև Երևանի բերդից դուրս գտնվող բնակավայրերի քանդման և կատարված այլ ավերածությունների նկարագրությանը: «Հաղթական բանակի դեպի Երևան գնալը և իսլամական բանակի շարժման ուղղությունը որոշվելուց հետո, [Երևանի բերդի] պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարեցվեցին և պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց»¹⁸:

Ուշադրության են արժանի նաև կաթոլիկ հայ համայնքին վերաբերող թուրքական աղբյուրները: Հայտնի է, որ եվրոպական պետությունները XVI դարի վերջերից միսիոներների քողի տակ իրենց գործակալներին ուղարկելով Արևմտյան Հայաստան, նպատակ էին հետապնդում հայերին կաթոլիկ դարձնել և աղապիսով ուժեղացնել իրենց գաղափարական ազդեցությունը Օսմանյան կայսրությունում: Թուրք պատմագիր-տարեգիր Չելեբի Զադեն իր «Պատմություն» մեջ մանրամասն կանգ առնելով այդ իրադարձությունների վրա գրել է. «Ֆրանսիացի [կաթոլիկ] վարդապետների ցեղից որոշ սատանայական անձինք, նենգ նպատակներով, օսմանյան փառիշահական երկրում մեծ ու փոքր քաղաքներ շրջելով, այս ու այն կողմ երթեկեկելով, հույն, հայ քրիստոնյա ռայաների մեջ ֆրանսիական (էֆրենջի) սնոտի դավանանքն առնալով ժխտակատարություն էին քարոզում»¹⁹:

Հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների միջև տեղի ունեցող վեճերի և պայքարի մասին հետագայում իր տարեգրության մեջ մանրամասն գրել է նաև պատմագիր Ահմեդ Զեդեթ փաշան: «Հիշրայի 1195 (1780) թվականից սկսած,— գրում է Զեդեթ փաշան,— կաթոլիկ վարդապետները, շրջելով Օսմանյան կայսրությունում, աշխատում էին հայերին կաթոլիկ դարձնել: Իսկ հայոց պատրիարքը, սուլթանական հրովարտակով իրեն շնորհված իրավունքով ամեն կերպ պայքարում էր կաթոլիկ քարոզիչների դեմ: Կաթոլիկները ընդհանրապես օսմանյան երկրում ինքնուրույն եկեղեցիներ չունեին և նրանց մեռյալները, հայոց գերեզմանատներում չընդունվելու պատճառով, հաճախ անթաղ էին մնում և գարշահոտում, նրանք ստիպված էին լինում մեռելները թաղել իրենց տների բակերում»²⁰:

Սուլթան Աբդուլ Համիդ I-ի (1774—1789) կողմից արձակված հրամանագրերը ցույց են տալիս, որ սուլթանական կառավարությունը աջակցել է Ատամբուլի պատրիարքարանին՝ կանխելու կաթոլիկ միսիոներների գործունեությունը հայաշատ շրջաններում: Այդ վեճերն ու տարաձայնությունները կարգավորելու համար սուլթան Աբդուլ Համիդ I-ը արձակել է մի քանի հրամանա-

18 Թուրքական աղբյուրները ..., հ. Ա, էջ 141—152:

19 Նույն տեղում, էջ 156:

20 Նույն տեղում, էջ 300—301:

դրեր, որոնցում ակնարկվում էր հայ կաթոլիկներին խստագույնս պատժելու և աքսորելու մասին: Այդ հրովարտականների թարգմանությունները հրապարակված են «Դիվան հայոց պատմության»²¹ մեջ հետևյալ խորագրերով՝ «Օրինակն Ֆերմանի Ղալաթիայու վոյվոտային հայկական բառիվ» (էջ 229—234), «Ի Ղալաթիայ նստեալ դեսպանաց ֆերմանի հայկականն է» (էջ 233—240), «Սա է Լենիչէր աղասուն ֆերմանի հայկական թարգմանեցեալն» (էջ 239—248):

Հայ լուսավորչական եկեղեցու սկզբունքային պայքարին հակառակ, XVIII դարի սկզբների թուրքական կառավարությունը, Ֆրանսիայի և Ավստրիայի ադպլացության ներքո, ժամանակ առ ժամանակ ղիջումներ էր անում եվրոպական պետությունների այս ազգապառակտիչ գործունեությանը:

Առաջին օրենսդրական բերաթը՝ ուղղված հայ կաթոլիկ համայնքին, տրվել է հիշյալի 1246 (1831) թ.²², երկու տարի անց Ստամբուլի ֆրանսիական դեսպանության պահանջով Բարձրագույն դուռը հայ կաթոլիկ կրոնապետին շնորհեց նաև պատրիարքի տիտղոս: Հետագայում կաթոլիկ պատրիարքի իրավասության տակ անցան ապոստոլները, քաղաքացիները, մարտնիները, մեկրիները²³:

Ինչպես նկատեցինք, թուրքական պատմագրության ընձեռած նյութերը առավել նշանակություն ունեն Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական պատմության համար, մինչդեռ երկրի սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող տեղեկությունները բավականին աղքատ են: Այս տեսակետից առաջնակարգ կարևորություն են ստանում Թուրքիայի և այլ երկրների արխիվներում պահվող Օսմանյան կայսրության պատմության վերաբերող վավերագրական նյութերը:

Վերջին տասնամյակներում թուրքական պատմագրությունը սկսել է հատուկ ուշադրություն դարձնել Օսմանյան կայսրության վաղ շրջանի պատմության ուսումնասիրությանը: Թուրքիայում լույս են ընծայվել արխիվային բաղմաթիվ նյութեր և վավերագրեր: Այդ հրատարակություններում որպես կանոն շատ քիչ ուշադրություն է դարձված Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող փաստագրական նյութերին, մինչդեռ Թուրքիայի պետական արխիվներում և գրադարաններում կան չափազանց հարուստ հավաքածուներ:

Արևմտյան Հայաստանի XVI—XVIII դդ. սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն տրվյալ ժամանակաշրջանում գործունեության մեջ գտնվող օսմանյան օրենքները, որոնք առաջին անգամ լինելով հրապարակվեցին Թուրքիայում Օ. Լ. Բարկանի կողմից²⁴, Որպես պատմական աղբյուրներ դրանք բավականին պարզորոշ ցույց են տալիս Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի գյուղացիության իրավական վիճակը, լուսաբանում են հողատիրության ու հարկային սխտեմի հետ կապված բաղմաթիվ հարցեր: Այդ օրինամատյաններից հայ ժողովուրդին վերաբերող նյութերը առաջին անգամ թարգմանաբար հայ ընթերցողին են ներկայացրել Ա. Սաֆրաստյանը և Մ. Զուլալյանը²⁵, Այդ աշխատության մեջ հրատարակիչների նպատակը չի եղել

²¹ S. Կ. Գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ—ԺԹ դդ., հրատ. Գյուտ Աղանյանց. Թիֆլիս, 1912, էջ 219—256:

²² Ա. Պ եր պ եր յ ա ն. Հայոց պատմություն. Կ. Պոլիս, 1871, էջ 28:

²³ А. У б и ч и н и П. де Куртейль. Современное состояние Османской империи. СПб. 1877, с. 187.

²⁴ О. Л. Баркан. XV ve XVI-ci asırlarda Osmanlı İmparatorluğunda zirai e'or noimlndn hukuki ve mali esasları, c. I, Kanunlar. İstanbul, 1945.

²⁵ Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVII դդ.). Կանոնադրություններ, թարգմանություններ, առաջարկներ և ծանոթագրություններ Ա. Սաֆրաստյանի և Մ. Զուլալյանի. Երևան, 1964:

բերված օրինամատյանների (կանոնամե) բազմակողմանի ուսումնասիրությունը, Այնուհանդերձ, նրանք առաջաբանում և ծանոթագրություններում տրվել են օսմանյան կանոնամեների ծագման և զարգացման համառոտակի պատմությունը և դրանց հետ կապված մի շարք հարցերի լուսաբանությունը: Հարկ է նաև նշել, որ հայ ժողովրդի պատմության հետ առնչվող մի շարք վավերագրեր դուրս են մնացել տվյալ հրատարակությունից: Թվով 10 այդ վավերագրերը առաջաբանով և ծանոթագրություններով հրապարակվել են սփյուռքահայ պատմաբան Լևոն Վարդանի կողմից²⁶:

1962—1965 թթ. լույս տեսան թուրք պատմաբան Հագիե Թունջերի կազմած կանոնների և կանոնամեների երկու ժողովածուները²⁷, Հեղինակը համառոտ առաջաբանում նշում է, որ կանոնամեների պատճենները վերցրել է Թուրքիայի միևնույն տեղերի խորհրդի արխիվի գլխավոր վարչությունում գտնվող բնագրերից, իսկ կանոնները՝ հայտնաբերել է Դրեզդենի ազգային գրադարանում: Ընդհանրապես, կանոնների տարեթվերը չեն նշված, սակայն դրանց մասին մենք իրազեկ ենք դառնում տվյալ ժամանակի սուլթանի կամ վեզիրի հրամանագրի թվագրությունից: Հեղինակի կարծիքով այդ կանոնների ժամանակաշրջանը ընդգրկում է Օսման I-ից (1299—1325) մինչև սուլթան Ահմեդ III-ը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վերաբերում են XV—XVII դդ.: Այդ կանոնների բովանդակությունները մասամբ քաղված են սուլթանական հրովարտականից, ինչպես նաև այս կամ այն վիլայեթների կանոնամեներից: Իհարկե, առանձին կանոններ ինքնուրույն են և պարունակում են հետաքրքիր նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում և հայերի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Օրինակ, Երևանի և Բասենի լիվանների (գավառ) կանոնամեները և զանազան բնույթի կանոնները կարևոր նյութեր են բովանդակում այդ շրջանների հողատիրության և հարկային համակարգի մասին:

Նման կարևոր սկզբնաղբյուր են համարվում նաև Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերող թուրքական հարկացուցակները: Այդ հարկացուցակներից մեկը, որը կազմվել է 1726—1736 թթ. թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի նվաճման ընթացքում, վերաբերում է Վաղարշապատ գյուղին: Այս հարկացուցակի բնագիրն ու հայերեն թարգմանությունը հրատարակել է Հ. Փափազյանը²⁸, նա ուսումնասիրության առարկա է դարձրել 1728 թ. գործողության մեջ մտած մի այլ հարկացուցակ ևս, որը կարևոր նյութեր է բովանդակում էջմիածնի վանքի կալվածների և նրա հարկային արտոնությունների մասին: Այս հարկացուցակները միևնույն ժամանակ որոշակի պարզություն են մտցնում XVIII դարի սկզբին Արևելյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում Օսմանյան կայսրության վարած հարկային քաղաքականության մեջ: Հարկ է նշել, որ Հ. Փափազյանը հայ ընթերցողի ուշադրությունն է հանձնել նաև Երևանի բերդի 1724—1725 թթ. մուկաթաանների Արքունի Դիվանին ներկայացված ելից և մտից գաֆթարի թուրքերեն արժեքավոր բնագրի լիակատար վերծանությունն ու հայերեն թարգմանությունը²⁹:

²⁶ Տե՛ս Օսմանյան հարկային կանոնագրությունները և արևմտահայությունը.—«Հայկազյան հայագիտական հանգես», Պետություն, 1977—1978, էջ 105:

²⁷ Hadiye Tunçer. Osmanlı İmparatorlugunda toprak hukuku, arazi kanunları ve kanun açıklamaları. Ankara, 1962; Osmanlı İmparatorlugunda toprak kanunları. Ankara, 1965.

²⁸ Տե՛ս Նրա Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները.—«Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 431—484:

²⁹ Տե՛ս ՊՐ2, 1984, № 3, էջ 195—214:

1979 թ. հրատարակվեց «Զրլգրրի էյալեթի ջաբա դաֆթարը»³¹, ուր տրված է XVII—XVIII դդ. Ախալցխայի վիլայեթի Օսմանյան կայսրության պաշտոնական հաշվառումը³²։ Դաֆթարի օսմաներեն բնագիրը, որը գրված է դիվանի դժվարընթեռնելի գրչությամբ, վերծանել և վրացերեն է թարգմանել վրացի տղարուրագետ Յ. Աբուլաձեն, իսկ բովանդակությունը ուսումնասիրության նյութ է դարձրել Մ. Սվանիձեն։ Զաբա դաֆթարի բնագիրը պահվում է Սոֆիայի Կիրիլ ու Մեթոդի անվան հանրային գրադարանի արևելյան բաժնում, Մ. Սվանիձեի տված տեղեկության համաձայն «Զաբա դաֆթարը» կազմված է Կարսի և Տրապիզոնի համանման հաշվառման մատյանների հետ միասին, Այս կրիք մատյանները բաղկացած են 243 էջերից, որից 178-ը կադմուս է «Զրլգրրի էյալեթի ջաբա դաֆթարը»։ Ընդհանուր առմամբ «Զաբա դաֆթարը» գրված է Զրլգրրի էյալեթի ավատատիրական տիրույթների հաշվառումը ժամանակագրական կարգով՝ սկսած հիշրայի 1106 (1694) թ. մինչև 1143 (1732) թ.։ Նշված են տվյալ վիլայեթում գտնվող նահիենների (գյուգախումբ), լիվանների ավատատերերի անունները (երբեմն հայրանունների հետ միասին), ավատատերերին ենթակա գյուղերը, հաստատման տարեթվերը և վերջում՝ տարեկան եկամուտները։ Այստեղ գրանցված երեք տեսակի տիրույթները՝ խասսը (արքունապատկան հողային տիրույթ), զեամեթը և թիմարը (մանր հողային տիրույթ) շնորհվում էին սուլթանի կողմից տվյալ ավատատիրոջը, որը պարտավոր էր պատերազմի ժամանակ, ըստ իր տարեկան եկամուտի, ջերելու (հետիոտն զինվոր) տրամադրել և հոգալ նրա ծախսերը։

«Զաբա դաֆթարում» արձանագրված են 17 խասսեր, 90 զեամեթներ և 767 թիմարներ։ Տարեկան եկամուտների վերլուծումը ցույց է տալիս, որ Զրլգրրի էյալեթում գերակշռել է խոշոր ավատատիրական հողատիրությունը։ Ավատների 60 տոկոսը ունեցել է 5000 ալլե և ավելի տարեկան եկամուտ։ Զրլգրրի էյալեթի սանջակների տարեկան եկամուտը կազմել է 4499589 ալլե։ Հարկ է նշել, որ Զրլգրրի էյալեթում մի շարք սանջակներ իրենց տրամագրության տակ գտնվող խասսերը օգտագործել են յուրթլուքի և օջաքլուքի ժառանգական իրավունքով։ «Զաբա դաֆթարից» երևում է, որ ավատատերերի մեծ մասը կրել է մահմեդական անուն։ Մ. Սվանիձեն ենթադրում է նույնց մի մասի ծագումով վրացի լինելը։ Մեր կարծիքով չի բացառվում նաև, որ նրանց մեջ լինեն հայ ավատատերեր, քանի որ հաշվառման ցուցակում հիշատակվում են բավականաչափ հայկական գյուղերի, շրջանների անուններ։

Ստամբուլի հայ համայնքին և մասամբ էլ ոչ մահմեդական այլ հպատակներին վերաբերող Թուրքական պաշտոնական վավերագրերը հիմնականում ամփոփված են Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի «Ստամբուլի XVI դարի կյանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածուում³²։ Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վավերագրերը վերցված են Ստամբուլի պետական արխիվից։ Ցուրաքանչյուրին՝ ըստ բովանդակության, տրված է համապատասխան վերնագիր։ Իսկ վավերագրերի վերջում նշված տարեթվերը ղուլդ են տալիս, որ դրանք հրապարակվել են սուլթան Սուլեյման I-ի (1520—1566), սուլթան Սելիմ II-ի (1566—1574) և սուլթան Մուրադ III-ի (1574—1595) ժամանակաշրջանում։

Սուլթանական այդ հրովարտակները բովանդակում են եկեղեցիների և այլ պաշտամունքային շինությունների քանդման, դավանափոխության, կրոնական ծիսակատարությունների և քրիստոնյա բնակչության ազգային տարազի

³⁰ Джаба дефтер чилдырского эялета, 1694—1732 гг. Тбилиси, 1979 (Այս աշխատությունը գրախոսել է Մ. Զուլայանը. տե՛ս ՊՐԶ, 1982, № 4, էջ 192—193)։

³¹ Նույն տեղում, էջ 209։

³² Ahmet Refik. Onaltinci asır'da İstanbul hayatı (1553—1591). 2-ci basımı, İstanbul, 1935.

հարցում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերյալ և այլ բնույթի նյութեր:

Կանոնները, կանոննամենները, հարկացուցակները, հրովարտակները և այլ բնույթի վավերագրերը որոշակի պատկերացում են տալիս Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում և արևմտահայերի սոցիալ-տնտեսական ծանր դրության մասին: Հաշվ է նշել, որ քրիստոնյա բնակչությունը պարտավոր էր այնպիսի լրացուցիչ հարկեր վճարել պետությանը, որոնք չէին գանձվում մահմեդականներից: Նման հարկերից են կանոննամեններում հաճախակի հիշատակվող խարաջը, իսկ ենջը, մուրախասին և այլն: Բացի այդ, XVII դարի երկրորդ կեսից սկսած, ֆինանսական աճող դավարություններից ելնելով, պետությունը տեղական նոր հարկեր էր սահմանում ոչ մահմեդական բնակչության վրա: Այս հանգամանքը հիմնական պատճառներից մեկն էր, որի հետևանքով բնակչությունը տրեստեսպիս քայքայվելով՝ հարկադրված լքում էր իր հայրենիքը:

Թուրքական աղբյուրների գիտական ուսումնասիրության ու հայերեն թարգմանության նախաձեռնությունը, ինչպես նաև հրապարակումը, պատկանում է Ա. Խ. Սաֆրաստյանին: Հրապարակի վրա գտնվող «Թուրքական աղբյուրներ» շորս հատորները³³ հանդիսանում են նրա երկար տարիների արգասավոր և քրտնաջան աշխատանքի արդյունքը: Մինչ Ա. Խ. Սաֆրաստյանը հայ պատմագրության մեջ ոչ ոք հատուկ չէր զբաղվել թուրքական աղբյուրները վերծանելու, թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու խնդրով: Նա առաջինն էր, որ ձեռնարկեց օսմաներենի իրավական և պատմական տերմինների թարգմանության բարդ գործը: «Թուրքական աղբյուրներ» մատենաշարի շորս հատորներում ընդգրկվել են թուրքական այն պատմագիր-տարեգիրների երկերը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հայ ժողովրդի պատմության համար: Ա. Խ. Սաֆրաստյանը չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերի թարգմանությանը, նշված հատորները բավական հարուստ նյութ են պարունակում նաև Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Փառվածաբար արված թարգմանությունները հիմնականում վերաբերում են XVI դարի սկզբին ծավալված իրանա-թուրքական պատերազմների մանրամասն նկարագրությանը, որոնք որոշ դադարներով շարունակվեցին մինչև XVIII դարը³⁴:

Օսմանյան օրենքների, հրովարտակների և այլ վավերագրերի հավաքման գործում երկար տարիների քրտնաջան աշխատանք է կատարել պոլսահայ իրավագետ Սարգիս Կարադոչը: Նա հավաքել է Ստամբուլի, Բեռլինի, Վիեննայի և Դրեզդենի պետական մատենադարաններում պահվող վավերագրերի պատճենները, ինչպես նաև Ստամբուլի հուլյն և հայ ուսումնականների արխիվների փաստաթղթերը և կազմել «Քյուլլիաթ-ի կավանին»³⁵ օրենքների ժողովածուն: Այսօր այն անտիպ վիճակում պահվում է «Թուրքական պատմական ընկերության ձեռագրային ֆոնդում»: «Քյուլլիաթ-ի կավանին»-ը

³³ Թուրքական աղբյուրներ..., հ. Ա, Երևան, 1961. հ. Բ, 1964. հ. Գ, 1967. հ. Դ, 1972:

³⁴ Ժամանակակից թուրք պատմաբան Ցավուզ Էրջանը սխալվում է, նշելով, թե իբրև հայ պատմաբանները անտեսում են թուրքական աղբյուրները և չեն օգտագործում դրանք: Yavuz Ercan. Türkiye'de XV ve XVI yüzyıllarda gayrimüslimlerin huku i, ictimai ve iktisadi durumu, — «Belleten», 1984, № 188, s. 1137. Իրականում հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրել են ոչ միայն միջնադարի թուրք պատմագիր-տարեգիրների երկերը, այլև հատուկ ուշադրություն են դարձրել ուշ շրջանի հայ-թուրքական հարաբերությունների վերաբերող ուսումնասիրությունների վրա և տվել դրանց իրական գնահատականը:

³⁵ Ahmet Mumcu. Külliyyat-ı kavanin, Sarkiz Karakoçun Osmanlı mevzuatı derlemesi, — «Belleten», 1972, № 143, s. 380.

բաղկացած է 47 թղթապանակներից, որոնք պարունակում են 35 000 փաստաթուղթ։ Առաջին թղթապանակի մեջ ընդգրկված են սուլթան Մեհմեդ II-ի յամանակաշրջանին վերաբերող հրամանագրեր, իսկ մյուսների մեջ ժամանակագրական կարգով բերված են 1517 թ. մինչև 1908 թ. հրապարակված փաստաթղթերը³⁶։

Օսմանյան օրենքների և դաֆթարների մեծ մասը պահվում է Ստամբուլի «Մինիստրների խորհրդի» (Nispetiye Divanı, և «Թուփքափը թանգարանի» (Ticari-Karî Hanı) արխիվներում։ Վերջին շրջանում Թուրքիայում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ մեծ թվով դաֆթարներ պահպանվել են նաև «Քյամիլ Քեփեջիի հավաքածուում»։ Յավուզ էրջանի ավյալներով այս հավաքածուում ամենահնագույնը 2529 համարի տակ գտնվող դաֆթարում ամփոփված 1517 թ. սուլթան Սելիմ II-ի կողմից նրուաաղեմի հայ պատրիարք Սարգիս Գ-ին տրված հրովարտական է³⁷։ Ստամբուլի կայսրական դաֆթարները, որոնց մեջ հայերին վերաբերող մասերը հերթականությամբ գտնվում են հետևյալ վերնագրերի տակ. 1) 1860—1904 թթ. հայերին, վերաբերող վճիռների դաֆթար։ 2) 1839—1910 թթ. հայերին վերաբերող բերքային դաֆթար։ 3) 1820—1857 թթ. հայերին վերաբերող հնաչույն վճիռների դաֆթար։ 4) 1911—1915 թթ. հայերին վերաբերող բերքային դաֆթար։ Նույն արխիվում 7 առանձին խմբերով դասավորված են նաև 1869—1921 թթ. վերաբերող արևմտահայերի «նկեղեցական դաֆթարները»³⁸։

Օսմանյան արքունիքի դիվանատան վավերագրերի մի մեծ հավաքածու գտնվում է Սոֆիայի Կիրիլ և Մեթոդիի անվան հանրային գրադարանի արևելական բաժնի արխիվում։ Հ. Փափազյանի տվյալներով XVI—XIX դդ. ավելի քան 300-ամյա մի ժամանակաշրջանի վերաբերող վավերագրերի ընդհանուր թվով մոտավորապես 30 000 է, որից 11 500 արխիվային միավորներ վերաբերում են չուս պատմական Հայաստանին (ներառյալ նաև Արևելյան Հայաստանը), իսկ 18 000 միավոր՝ Կիրիլիայի և Օսմանյան կայսրության այլ հայաշատ նահանգներին³⁹։

Հ. Փափազյանը ուսումնասիրության նյութ դարձնելով «Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը», նշում է, որ միայն Վանի նահանգին վերաբերող փաստաթղթերի թիվը 927 միավոր է, որոնցից հնագույնը կրում է հիշրի 935 (1577) թ.։ Այդ նյութերը, որպես պատմական սկզբնաղբյուր, մեծ նշանակություն ունեն Վանի նահանգի հողատիրության, հարկատվության, սոցիալ-տնտեսական կյանքի զանազան բնագավառների և ռազմատնտեսության համակարգի ուսումնասիրման համար։ Վերջում Հ. Փափազյանը հրատարակել է նաև Վանի մուհաֆիզ (կառավարի) Թեյմուր փաշայի 1736 թ. Բարձրագույն դռանը ներկայացրած մի զեկուցագրի բնագրի նմանահանությունը, վերծանությունն ու հայերեն թարգմանությունը⁴⁰։

Հայ ժողովրդի XVII—XVIII դդ. պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև Մատենադարանում պահպանված մեծ թվով վավերագրեր։ Այդ առումով հարկ է նախ և առաջ հիշատակել միջնադարում էջմիածնի դիվանատանը պահվող պարսկերեն և թուրքերեն վավերագրերի ուսումնասիրության դործում Սիմեոն կաթողիկոս

³⁶ Նույն տեղում։

³⁷ «Belleten», 1984, № 188, s. 1120.

³⁸ Նույն տեղում, էջ 1121։

³⁹ Տե՛ս Հ. Գ. Փափազյան. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը.—ՊՐՀ, 1984, № 3, էջ 195—214։

⁴⁰ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 15, 1986, էջ 274—287։

Երևանցու (1763—1780 թթ.) մեծ խնամքով կատարած աշխատանքը⁴¹։ Սիմեոն Երևանցին իր գրքում տվել է հայ եկեղեցու պատմությունը, մանրամասն կանգ է առել անցյալի և իր ժամանակի նշանավոր իրադարձությունների վրա, իսկ վերջում՝ պատմողաբար տվել պարսկերեն և թուրքերեն վավերագրերի համառոտ բովանդակությունը։ Բնականաբար, այդ համառոտ ամփոփումները չեն կարող լիարժեք համարվել, քանի որ հրովարտականերում արտահայտված հարցերը չեն շոշափվել իրենց բոլոր կողմերով։ Համառոտագրված թուրքերեն վավերագրերը 87 են և տրված են «Ջամբոխ» երկու զուգահեռներում⁴²։

Բերված վավերագրերը հիմնականում վերաբերում են հայ կաթոլիկների իրավունքների և արտոնությունների հաստատման, էջմիածնի նվիրակների կամ ուխտավորների ազատ շրջագայության, հարկահավաքման, հարկերի քանակի ճշտման, վանական ստացվածքների իրավունքների և այլ կրոնական վեճերի կարգավորման հարցերին։ Սիմեոն Երևանցու այս աշխատությունից հետո էջմիածնի հրովարտականների ու կալվածագրերի թիվը բավականաչափ բազմապատկվել է։ Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանի» արխիվային ֆոնդում պահվող թուրքական վավերագրերը շուրջ 300 միավոր են, որոնցից հնագույնը կրում է հիշրայի 995 (1586) թ.։ Այս վավերագրերը բնութագրված են Զ. Փափազյանի «Մատենադարանի թուրքական վավերագրերի աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում⁴³։ Միևնույն ժամանակ նա հրատարակել է Երևանի կառավարիչ Ռաջաբ փաշայի հրամանագրի (տրված 1726 թ.) բնագիրը, նրա վերծանությունը և ուսերեն թարգմանությունը։ Հրամանագիրը վերաբերում է էջմիածնի վանքի իրավունքներին և հարկային արտոնություններին։

Վերահիշյալ նյութերի (ինչպես նաև Երուսաղեմի դպրեվանքի դրապահոցում և այլ արխիվներում պահվող նյութերի) հրապարակումը, բնականաբար, կնպաստեր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի սլաւոնական բազմակողմանի ուսումնասիրության գործին⁴⁴։ Թեև թուրքիայում առ այսօր հրապարակված վավերագրերը արխիվներում պահվող հարուստ ֆոնդերի խիստ աննշան մասն են կազմում միայն, այնուհանդերձ այդ փաստաթղթերում կարելի է որոշակի տեղեկություններ գանել նաև Արևմտյան Հայաստանի նահանգների և հայաբնակ շրջանների վերաբերյալ։

⁴¹ Սիմեոն Երևանցի. Ջամբո. Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաից որպիսութեանց սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից Վանօրէիցն. Վաղարշապատ, 1873 (տե՛ս նաև ուսերեն հրատարակությունը՝ С. С. Симеон Ереванци. Джамбо. Памятная книга зеркало и сборник всех обстоятельств святого престола Эчмнадзина. М., 1958)։

⁴² Նույն տեղում, էջ 234—252։

⁴³ А. Д. Папаян. Источниковедческое значение турецких документов Матенадарана—Средневековый Восток, М., 1980, с. 208—217.

⁴⁴ Մեր թարգմանությամբ շուտով առանձին գրքով հրատարակության կհանձնվեն XVI—XVIII դարերին վերաբերող թուրքական մի շարք վավերագրային նյութեր։

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ XVI—XVIII вв.

(КРАТКИЙ ОБЗОР)

А. А. ПАПАЗЯН

Резюме

Турецкие историки XVI—XVIII вв. в своих сочинениях, описывая политическое состояние Османской империи, одновременно передают интересные сведения об Армении, о различных сторонах социально-экономической жизни армян. В этих трудах особое внимание уделено продолжительным турецко-иранским войнам, имевшим место в Закавказье и, в частности, на территории Армении. Во время этих войн Эриванская крепость и другие города и села Армении стали яблоком раздора между османскими и иранскими завоевателями. Первостепенными источниками являются также турецкие документальные материалы, хранящиеся в архивах Турции и других стран. Среди них—законы о землевладениях, о сборе податей, отражающие различные стороны военно-феодального строя. Важное значение имеют также султанские указы, касающиеся правового положения немусульманских народов.